



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ԴԵՐԱՆՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՑՈՒՑԻՉ
ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

ՋՈՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հիմնաբառեր՝ ակադեմիական գրավոր խոսք, «ես» անձնական դերանուն, «հեղինակային մենք», գիտական շարադրանքի հեղինակ, «բացառող մենք», «ներառող մենք»

Հոդվածում քննարկվում է ակադեմիական գրավոր խոսքում «ես» անձնական դերանվան կիրառման դեպքերը՝ որպես գիտական շարադրանքում հեղինակի դիրքորոշումների արտահայտման ցուցիչ: Ակադեմիական գրավոր խոսքը բնորոշվում է օբյեկտիվությամբ, վերացարկվածությամբ, կանոնավորությամբ, ճշգրտությամբ, պարզությամբ և անդեմությամբ: Վերջին տարիներին արևմտյան գիտական հանրային գիտական խոսքի անդեմությունը համարում է ավելորդ ձևապաշտություն և խորհուրդ է տալիս գիտական շարադրանքում անկաշկանդորեն գործածել «ես» անձնական դերանունը՝ որպես սեփական դիրքորոշումներն արտահայտող միջոց:

Այսօր դարի ընձեռած գիտատեխնիկական հնարավորությունները, ազգաբնակչության ազատ տեղաշարժը, տեղեկատվական աղբյուրների հասանելիությունն ու մատչելիությունը հայ գիտնականներին, հետազոտողներին, ուսանողներին և տարբեր ոլորտի ասպիրանտներին հնարավորություն է տվել գիտական հոդվածներ տպագրելու միջազգային գիտական պարբերականներում: Ակնհայտ է, որ այսպիսի պարբերականներում տեղ գտած աշխատությունը մեծ նպաստ է բերում ոչ միայն աշխատության հեղինակին, այլև հայ գիտությանը: Այս համատեքստում ավելի է կարևորվում հայ սովորողի կողմից օտար լեզվով ակադեմիական գրագրության առանձնահատկությունների յուրացումը: Օտար լեզվով գիտական հոդվածներ, հաղորդումներ, ատենախոսություններ գրելու կարողությունը զգալիորեն մեծացնում է հետազոտողի մրցունակությունը համաշխարհային գիտության ասպարեզում: Այդուհանդերձ, ակադեմիական գրագրության հմտությունների ձևավորման և զարգացման համար բավարար չէ միայն գիտական տեքստի բառային և քերականական առանձնահատկությունների յուրացումը: Ակադեմիական գրագրությունը բարդ գործընթաց է, որտեղ անհրաժեշտ է նաև հստակ պատկերացում

ունենալ խոսույթային, գործաբանական, հոետորական ռազմավարությունների վերաբերյալ, որոնք ներհատուկ են անգլոամերիկյան ակադեմիական գրավոր խոսքին: Չնայած այն հանգամանքին, որ շատ հետազոտողներ խոսում են ակադեմիական գրավոր խոսքի «ոչ մշակութափոխ» լինելու մասին՝ այդուհանդերձ, անգլոամերիկյան ակադեմիական գրավոր խոսքի առանձնահատկությունների համեմատությունը եվրոպական երկրներում շրջանառվող ակադեմիական գրագրության տարրերի հետ՝ վեր է հանում գիտական ոճի մի շարք «մշակութափոխ» (культурно обусловенно) առանձնակատկություններ (Варгина 2004: 32-33): Այսպիսի գատորոշիչ առանձնահատկություններից են մեջբերումների առատ գործածությունը, ընդ որում՝ ամենաթարմ հրատարակումներից, հոետորական հարցերի բացակայությունը, գիտական շարադրանքին «մեղմություն» հաղորդող լեզվական միավորների գործածումը՝ հեջինգը, կապերի և շաղկապների առատ կիրառումը, գիտական շարադրանքի կառուցվածքի ճիշտ պահպանումը՝ նախաբան, հիմնական մաս, վերջաբան (Hyland 2006: 44): Հայ իրականության մեջ պրոֆ. Եզեկյանը վերոնշյալ իրողությունները համարում է գիտական ոճի կարևոր հատկանիշներ, սակայն նա նշում է, որ հայ հեղինակների գիտական ոճով գրված աշխատություններում գործածվում են նաև դերբայական դարձվածով նախադասություններ, որոնք հաճախ փոխարինում են երկրորդական նախադասություններին և ավելի հակիրճ են դարձնում շարադրանքը (ինչպես՝ վերլուծելով նշված փաստերը, համեմատելով այս հասկացությունները, նշվածը ամփոփելու համար և այլն): Ի դեպ, նշված կառույցներն ավելի բնորոշ են թարգմանական գրականությանը, հատկապես ռուսերենից հայերեն կատարված գիտական նյութի թարգմանություններին (Եզեկյան 2006: 40):

Տարբեր լեզուներով գիտական խոսքաշարի կարևոր և պարտադիր հատկանիշներից է շարադրանքի օբյեկտիվությունն ու անդեմությունը, այսինքն՝ «հեղինակային, անհատական գործոնի» բացակայությունը: Գիտական շարադրանքի օբյեկտիվության կարելի է հասնել մի շարք բառային և քերականական հնարների միջոցով, սակայն առավել տարածված երևույթ է «ես» անձնական դերանվան բացառումը գիտական խոսքում: Ըստ Լ. Եզեկյանի՝ գիտական շարադրանքում կարելի է կիրառել անձնական դերանվան հոգնակի առաջին դեմքը՝ «մենքը», իբրև «հեղինակային մենք»՝ և՛ եզակիի, և՛ հոգնակիի իմաստով: Անձնական դերանվան եզակի թվի առաջին դեմքի փոխարեն հոգնակիի գործածությունը հաճախակի հանդիպող երևույթ է գիտական շարադրանքներում և ունի ոճական հատուկ նպատակադրում. նախ և

առաջ, այն արտահայտում է հեղինակի համեստ վերաբերմունքը, իր «ես»-ը թաքցնելու ձգտումը, և քանի որ ոճական այս հնարը հիմնականում կիրառում են հեղինակները, ուստի նշված կիրառությունն անվանում են «*հեղինակային մենք*» (Եզեկյան 2006: 38): Հավանաբար, այս երևույթը կարելի է բացարել այն հանգամանքով, որ հայալեզու գիտական տեքստերում շեշտադրվում է կոլլեկտիվության, համախմբվածության գաղափարը, որ ցանկացած գիտական շարադրանք միասնական, համընդհանուր ջանքերի արգասիք է: Անշուշտ, նմանատիպ ռազմավարությունը նվազեցնում է հեղինակի պատասխանատվությունը ներկայացված փաստերի վերաբերյալ: Անգլալեզու մասնագիտական գրականության մեջ «մենք» դերանունը ունի կամ ներառող (inclusive), կամ բացառող (exclusive) գործառույթներ: Այլ կերպ ասած, «բացառող մենք»-ը վերաբերում է միայն գիտական խոսքաշարի հեղինակին, մինչդեռ «ներառող մենք»-ը վերաբերում է և՛ հեղինակին, և՛ ընթերցողներին, և՛ գիտության շահագրգիռ կողմերին: Օրինակ՝

- 1) *We*, however, could not have included all the techniques found in the literature, so our list is far from being complete due to deliberate negligence of some minor techniques.
- 2) *We* decided on a set of informal guidelines to structure the implementation of the project; these included ideas about how to organize the notebooks.
- 3) According to Dewey, reflection helps our personal growth because it is the means how *we* free ourselves from a single point of view and the possible negative effects of one point of view.
- 4) Secondly, *we* need to become aware of what conventions in English are, and look at how these may or may not ‘feel right’ to speakers of other languages (Basal; Bada 2012: 1781–1782).

Ինչպես ակնհայտ է, առաջին և երկրորդ օրինակներում «մենք» դերանունը բացառող է. այն առնչվում է միայն հեղինակներին, այն է՝ արտահայտված դրույթների հավաստիության և արժանահավատության միակ պատասխանատուն շարադրանքի հեղինակներն են: Երրորդ և չորրորդ օրինակներում «մենք» դերանունը ներառող է, այսինքն՝ հեղինակների արտահայտած մտքերի ճշգրտության պատասխանատվությունը կրում են հեղինակները, ընթերցողները և այլ շահագրգիռ անձիք (կոլլեկտիվ մենք):

Շատ հաճախ յուրացնելով օտար լեզվով ակադեմիական գրավոր խոսույթի գատորոշիչ առանձնահատկությունները, հայ ուսանողները կարողանում են պատշաճ կերպով շարադրել իրենց մտքերը՝ պահպանելով տվյալ ոճին ներհատուկ լեզվաոճական նորմերը, սակայն

մյուս կողմից, տպագրության ներկայացված բազում հոդվածներում «հեղինակային ձայնը» (authorial voice), այսինքն՝ հեղինակի ներկայությունը աշխատության մեջ, բացակայում է կամ քողարկված է համեստ «*հեղինակային մենք*»-ի հետևում: Ճիշտ է, ինչպես նշվեց, ակադեմիական գրագրության այս պահանջով պահպանվում է գիտական շարադրանքի օբյեկտիվությունը, այդուհանդերձ, այս հնարի սակավ կիրառությունը կարող է հոդվածը վերածել զուտ գիտական փաստերի հաջորդական թվարկման:

Ներկայումս, երբ տարբեր ազգային պատկանելություն ունեցող գիտնականներ հոդվածներ են տպագրում միջազգային գիտական պարբերականներում, երբ այս ոլորտում մրցակցությունը համեմատաբար բարձր է, ակադեմիական գրավոր խոսույթին հատուկ օբյեկտիվությունն ու անդեմությունը աստիճանաբար անցյալի իրողության է վերածվում: Դեռ ավելին, հանրահայտ բրիտանաամերիկյան հրատարակչություններից մեկը հորդորում է «ազատվել նախորդ սերնդի գիտնականների կեղծ համեստությունից» և գիտական տեքստի օբյեկտիվությունն ապահովող կրավորական կառույցների փոխարեն օգտագործել 'I' և 'we' դերանունները (Day; Gastel 2012: 198) Ընդ որում, հրատարակչության հիմնադիր պրոֆ. Դեյր խորհուրդ է տալիս միանձնյա հեղինակներին խուսափել «հեղինակային մենք»-ից՝ անվանելով այն «աղաղակող պեղանտիզմ»: Այսպիսի պայմաններում գիտական խոսքաշարի հեղինակը գիտության այս կամ այն բնագավառում «կոշտ մրցակցային հանգամանքներին» դիմակայելու համար պետք է հստակ սահմանազատի սեփական «ես»-ը: Չնայած հայ և ռուս լեզվաբանության մեջ մինչև օրս առանձնացնում են գիտական ոճի օբյեկտիվությունը, տրամաբանականությունը, վերացարկվածությունը, պարզությունը, ճշգրտությունը (Чернявская 2011: 6; Кожина 2010: 289; Եզեկյան 2006: 31-32), այդուհանդերձ, շատ արտասահմանյան հեղինակներ սկսել են վիճարկել ակադեմիական գրավոր խոսույթի վերոնշյալ հատկանիշներից օբյեկտիվությունն ու անդեմությունը: Այսպես, անգլոամերիկյան գիտական տեքստերում «ես» անձնական դերանվան կիրառումը մեծապես կախված է կոնկրետ բնագավառից, օրինակ՝ ճշգրիտ և բնագիտական գիտություններում ընդունելի չէ հեղինակի «բացահայտ» ներկայությունը, մինչդեռ հումանիտար և սոցիալական գիտություններում ընդունելի է գիտական շարադրանքում առաջին դեմքի գործածումը: Ընդ որում, անձնական դերանվան առաջին դեմքի գործածումը հաճախադեպ է, երբ գիտական տեքստը բանավոր է ներկայացվում (Nelson&Castello՝ 2012: 12): Վերջին տարիներին տարբեր երկրների գիտնականներ իրականացրել են անգլալեզու գիտական խոսույթի միջմշակութային

կորպուսային հետազոտություններ: Այս հետազոտությունների արդյունքները վկայում են, որ շատ անգլալեզու հոդվածներում գործածվում է 'I' անձնական դերանունը: Այսպիսի արդյունքներ են գրանցվել, օրինակ, բուլղարացի, չեխ, թաիլանդցի լեզվաբանների անգլալեզու հոդվածներում, լեզվաբանության, գյուղատնտեսության, բուժքրոյության, ճարտարագիտության ոլորտներում, պարսիկ հեղինակների հոդվածների ամփոփումներում, հասարակագիտական գիտությունների ոլորտում թուրք հեղինակների ատենախոսություններում և այլն (Hyland 2002: 1110):

4. Հայլանդը, ութ տարբեր բնագառի գիտական հոդվածներում վերլուծելով դերանունների գործածությունը, հանգել է հետևյալ եզրակացության: Արդյունքները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով:

Բնագավառ	Ընդհանուրը	I	Me	My	We	Us	Our
Ֆիզիկա	17,6	0	0	0	12,7	0,2	4,7
Կենսաբանություն	15,4	0	0	0	11,5	0,5	3,4
Ռադիոտեխնիկա	11,6	0	0	0	8,4	0,1	3,1
Շուկայագիտություն	38,1	1,1	0	0,5	22,2	0,8	13,5
Փիլիսոփայություն	34,5	26,1	1,6	5,3	0,9	0,2	0,4
Կիրառական լեզվաբանություն	32,2	12,7	1,1	3,4	8,9	1	5,1
Սոցիոլոգիա	22,7	6,2	0,4	1,3	9,8	0,4	4,6
Մեքենաշինություն	2,6	0	0	0	2,1	0	0,5

4. Հայլանդը առանձնացնում է գիտական տեքստերում հեղինակային դրսևորման հետևյալ 3 եղանակները՝

- Հեջինգ՝ ակադեմիական գրավոր խոսքաշարի հեղինակը մի շարք բառաքերականական միավորների միջոցով անուղղակիորեն, թաքնված կերպով «ակնարկում» է իր դիրքորոշումների մասին: Անգլերենում գիտական շարադրանքը մեղմ, ոչ խիստ, ոչ հավակնոտ դարձնելու նպատակով կիրառվում է «զգուշավոր» լեզու: Այս երևույթը անգլերենում հայտնի է հեջինգ (hedging) եզրույթով:

- Բուստերներ՝ (boosters) հեջինգ հնարի հակառակ լեզվական իրողությունն է: Բառային միավորներ են, որոնք շարադրանքին հաղորդում են համոզվածություն, հստակություն և վճռականություն:
- «Ինքնահիշատակում» (self-mention)՝ անձնական դերանվան առաջին դեմքի կիրառում (Hyland 2005: 177):

«Ես» անձնական դերանունը օտարալեզու գիտկան տեքստերում կատարում է մի շարք գործառույթներ: Կ. Ֆլոտտումը առանձնացնում է անձնական դերանվան առաջին դեմքի հետևյալ գործառույթները՝

- Գիտական շարադրանքի հեղինակը՝ որպես տեքստի «ստեղծող» (*I-creator*): Որպես կանոն, գործածվում է հետևյալ բայերի հետ՝ describe, discuss, illustrate, outline, present, repeat, show, summarize, begin by, focus on, move on, (re)turn to, conclude by, նույնիսկ՝ описать, продемонстрировать, указать, показать, отмечать, сформулировать: Օրինակ՝ *I first show that the observed racial classification practices... did not contribute to the growth of the white population share. ... continuing to proceed counter-factually, I next show that the observed pattern of differential reproduction can help explain.*
In this paper, *I will focus* quantitatively and qualitatively *on* a particular form of interpersonal metadiscourse: person markers.
- Գիտական շարադրանքի հեղինակը՝ որպես *հետազոտող* (*I-researcher*): Օգտագործվում է հետևյալ բայերի հետ՝ analyse, assume, consider, choose, compare, explore, find, follow, limit, study, test, use, նույնիսկ՝ выявлять, обращаться, формулировать, проводить, рассматривать, анализировать: Օրինակ՝ *I construct* a variety of measures of labor market participation and performance. *I create* a continuous measure of amounts of total earned income from wages, salary, tips, self-employment. Following Oppenheimer et al. (1997), *I also use* respondents' reports of hours and weeks worked per year to categorize them as working full-time for the full year.
- Գիտական շարադրանքի հեղինակը՝ որպես քննարկման *մասնակից* (*I-participant*): Օգտագործվում է հետևյալ բայերի հետ՝ argue, claim, dispute, maintain, propose, reject, think, նույնիսկ՝ кажется, представляется, предполагать, считать, а также выражения на наш взгляд, по нашему мнению): Օրինակ՝ *I argue* that differences between rich and poor women are smaller in economically more developed countries... .
- Գիտական շարադրանքի հեղինակը՝ որպես *գնահատող* (*I-evaluator*): Օգտագործվում է հետևյալ բայերի հետ՝ feel, be content to, be struck by, find something + evaluative adjective; նույնիսկ՝ важный):

Օրինակ՝ My goal in this article is not to argue over whether we should view the proverbial cup as half empty or half full (arguments *I have* always found *uninteresting*) but, rather, to stretch toward an understanding of why some things change so much more than others.

«Ես» դերանունը առանձին գործառույթ է կատարում, երբ արտահայտվում է երախտագիտություն: Օրինակ՝ *I am deeply grateful to the ASR editors and anonymous reviewers for their extremely helpful suggestions, Я благодарен также за критику и рекомендации участникам семинара 18 мая 2011 г. в Томском государственном университете и двум анонимным рецензентам журнала*

Հաճախադեպ են նաև, երբ դերանունը կատարում է երկակի գործառույթ, օրինակ՝ տեքստ «ստեղծողի» և հետազոտողի գործառույթները՝ *I have already distinguished between two different types of racial switching* (Flottum 2009: 112).

Նորվեգացի հետազոտողները «Մշակութային ինքնությունը ակադեմիական արձակում» (Cultural Identity in Academic Prose) հետազոտական ծրագրի շրջանակներում երեք տարբեր բնագավառներում՝ տնտեսագիտություն, լեզվաբանություն, բժշկություն, ուսումնասիրել են երեք լեզուներով՝ անգլերեն, նորվեգերեն, ֆրանսերեն շարադրված գիտական տեքստերում դերանունների կիրառումը: Ըստ հետազոտության տվյալների՝ անգլերեն լեզվով շարադրված երեք բնագավառների բոլոր հոդվածներում էլ առաջատար է հեղինակի՝ որպես հետազոտողի գործառույթը: Սա բացատրվում է նրանով, որ անգլերեն լեզվով գրված գիտական տեքստի հեղինակը հստակորեն սահմանազատում է իր սեփական «ես»-ը՝ փորձելով այս կերպ «դիմակայել» միջազգային գիտական ասպարեզում գործող մրցակցությանը:

Ռուս հետազոտող Ի. Շեմելայի կողմից իրականացրած ուսումնասիրության արդյունքում (սոցիոլոգիայի ոլորտում) պարզ է դարձել, որ ռուսալեզու գիտական տեքստերում հեղինակը հանդես է գալիս որպես տեքստի ստեղծող, հետազոտող և քննարկման մասնակից: Այս երեք գործառույթներից համեմատաբար քիչ են դեպքերը, երբ գիտական խոսքաշարի հեղինակը հանդես է գալիս որպես հետազոտող: Անգլալեզու գիտական տեքստերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այն կառույցներում, որտեղ ռուս հեղինակները պարտավոր էին օգտագործել 'I' դերանունը, կիրառում են կրավորական կառույցներ, որոնք նպաստում են գիտական տեքստի «չեզոքության» պահպանմանը: Այստեղից ակնհայտ է, որ ռուսական գիտական հանրությունը դեռևս

գործում է ակադեմիական գրավոր խոսքի առանձնահատկությունների հետ կապված դասական, ավանդական մոտեցումը (Шемелева 2013:150) Մեկ այլ հետազոտող, Օ. Ա. Կրապիվկինան, իր աշխատության մեջ նշում է, որ անգլալեզու հոդվածներում «ես» դերանունը կիրառվում է հիմնականում ներածության և եզրակացության մեջ, որտեղ հեղինակները հանդես են գալիս որպես հետազոտողներ (Крапивкина 2015:100): Հայաստանը, երկար տարիներ լինելով Խորհրդային Միության բաղկացուցիչ մաս, կամա թե ակամա կրել և շարունակում է կրել ռուսական մշակույթի և գիտական նորմերի ազդեցությունը: Ամենևին պատահական չէ, որ հայ հեղինակների գիտական աշխատություններում առկա է ակադեմիական գրավոր խոսույթի նորմերի խստագույն պահպանում:

Ամփոփելով վերը նշված իրողությունները՝ կարելի է եզրակացնել, որ գիտական գրավոր խոսքի կադապարայնությունն ու «պահպանողականությունը» վիճարկելի են և քննության առարկա են դառնում գիտությամբ զբաղվող շատ անհատների կողմից: Մի կողմից՝ գիտնականը կամ հետազոտողը, ով զբաղվում է գիտությամբ և ուսումնասիրություններ է կատարում որոշակի բնագավառում՝ պետք է հստակորեն իր մասին ազդարարի գիտական աշխարհին, մյուս կողմից՝ գիտական խոսքում շրջանառվող նորմերը թույլ չեն տալիս դուրս գալ գիտական խոսքին բնորոշ օբյեկտիվության սահմաններից: Ահա այս համատեքստում է երևան գալիս միջմշակութային տարբերությունը: Ի տարբերություն ռուսական և հետխորհրդային երկրների գիտական գրագրության չափանիշների՝ այլ է պատկերը արևմտյան գիտական աշխարհում, որտեղ հեղինակը ազատ է և կարող է գիտական խոսքաշարում սեփական անձի հիշատակման միջոց ընտրել «ես»-ը՝ առանց անհարկի մտավախության, որ դրանով խախտել է գիտական գրավոր խոսքի նորմատիվային բնույթը: Ակնհայտ է, որ այս իրողությունները պետք է հաշվի առնվեն «Անգլերենը ակադեմիական նպատակների համար» դասընթացը կազմակերպելիս, որի ընթացքում սովորողներին պետք է ծանոթացնել ակադեմիական գրավոր խոսքի փոփոխվող հարացույցին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երևանի համալս. հրատ., Եր., 2006, 376 էջ:
2. Варгина Е. И., Научный текст и его воздействие (на материале английского языка), СПб., Филологический факультет СПбГУ, 2004, 212 с.

3. Крапивкина О. А., Способы репрезентации субъекта в научном дискурсе, Известия ВГПУ, Языкознание и литературоведение, 2015, 100-103 с.
4. Кожина М. Н., Дускаева Л. Р., Салимовский В. А., Стилистика русского языка: учебник. 2-е изд. М., Флинта: Наука, 2010, 464 с.
5. Чернявская В. Е., Коммуникация в науке: нормативное и девиантное. Лингвистический и социокультурный анализ. М., Книжный дом «Либриком», 2011, 240 с.
6. Щемелева И. Ю., Местоимения как средство передачи авторской позиции в английском и русском научных текстах, Вестник СПбГУ, Сер. 9, Вып. 4, 2013, 143-153 с.
7. Basal A., Bada E., Use of first person pronouns: A corpus based study of journal articles, Energy Education and Technology Part B, Social and Educational Studies, Vol. 4(3), Adana, 2012, 1777-1788 pp.
8. Day R.A., Gastel B., How to Write and Publish a Scientific Paper, Cambridge, Cambridge University Press, 2012. 324 p.
9. Flottum K., Academic voices in the research article, Cross-linguistic and cross-cultural perspectives on academic discourse / eds E. Suomela-Salmi, F. Dervin, Amsterdam, John Benjamin Publishing Company, 2009, 109-122 pp.
10. Hyland K., English for academic purposes, An advanced resource book, London, New York, Routledge, 2006, 340 p.
11. Hyland K., Stance and engagement: a model of interaction in academic discourse, Discourse Studies, Vol. 7, N 2, 2005, 173-192 pp.
12. Hyland K., Authority and invisibility: authorial identity in academic writing, Journal of Pragmatics, Vol. 34, Iss. 8, 2002, 1091-1112 pp.
13. Nelson N. Castello' M. [https:// www.researchgate.net/ publication/235265521_Academic_Writing_and_Authorial_Voice](https://www.researchgate.net/publication/235265521_Academic_Writing_and_Authorial_Voice).

REFERENCES

1. Ezekyan L., Hayoc lezvi otwagitowt'yown (owsowmnakan d'er'nark), Er&ani hamals. hrat., Er., 2006, 376 e'j:
2. Vargina E. I., Nauchnyj tekst i ego vozdejstvie (na materiale anglijskogo jazyka), SPb., Filologicheskij fakul'tet SPbGU, 2004, 212 s.
3. Krapivkina O.A, Sposoby reprezentacii sub#ekta v nauchnom diskurse, Izvestija VGPU, Jazykoznanie i literaturovedenie, 2015, 100-103 ss.
4. Kozhina M. N., Duskaeva L. R., Salimovskij V. A., Stilistika russkogo jazyka: uchebnik. 2-e izd. M., Flinta: Nauka, 2010, 464 s.

5. Chernjavskaja V. E., *Kommunikacija v nauke: normativnoe i deviantnoe, Lingvisticheskij i sociokul'turnyj analiz*, M., Knizhnyj dom «Librikom», 2011, 240 s.
6. Shhemeleva I. Ju., *Mestoimenija kak sredstvo peredachi avtorskoj pozicii v anglijskom i rusском nauchnyh tekstah*, Vestnik SpbGU, Ser. 9, Vyp. 4, 2013, 143-153 ss.

ЗОРИ БАРСЕГЯН - МЕСТОИМЕНИЕ КАК ПОКАЗАТЕЛЬ АВТОРСКОЙ ПОЗИЦИИ В АКАДЕМИЧЕСКОМ ПИСЬМЕ

Ключевые слова: *академическое письмо, личное местоимение «я», «авторское мы», автор научного письма, «экслюзивное мы», «инклюзивное мы»*

В статье обсуждается вопрос использования личного местоимения «я» в академической письменной речи как показателя позиции автора в научном изложении. Академическое письмо отличается объективностью, абстрактностью, регулярностью, точностью, простотой и безличностью. В последние годы западное научное сообщество сочло безличность научного дискурса излишним и выступает за использование личного местоимения «я» как средства выражения собственных взглядов.

ZORI BARSEGHYAN - PRONOUN AS AN INDICATOR OF AUTHORIAL STANCE IN ACADEMIC WRITING

Keywords: *academic writing, personal pronoun 'I', 'authorial we', author of scientific writing, 'exclusive we', 'inclusive we'.*

The article discusses the cases of usage of personal pronoun 'I' in academic writing as an indicator of expressing author's position in scientific writing. Academic writing is characterized by objectivity, abstractness, regularity, accuracy, clarity and impersonality. In recent years the western scientific community considers the impersonality of scientific writing as an unnecessary formalism and advises to use personal pronoun 'I' unrestrainedly in scientific writing as a means of expressing one's position.

Ներկայացվել է՝ 16.02.2021

Գրախոսվել է՝ 16.02.2021